ArmLur.am

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

ISSN 1829-2763

19 ապրիլի ուրբաթ 2024
տպագրության ԺԳ տարի

56
(2906)

100 դրամ

ք. Երեւան, Արովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

# ՀԻՎԱՆԴԱՆՈՑՆԵՐՈՒՄ ՊԵՏՊԱՏՎԵՐՈՎ ԲՈՒԺՈՒՄՆԵՐԸ ԿԱՍԵՑՎԵԼ ԵՆ




ՀՀ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանի hռչակած «օֆերտան» ֆիասկո է ապրել: Ինչպես հայտնի է, դեռեւս նախորդ տարեվերջին Ավանեսյանը Փաշինյանին վստահեցրել էր, թե պետական պատվերով ծառայությունների մասով սկսել է գործել չսահմանափակվող բյուջեով ՕՖԵՐՏԱՅԻ պայմանագիրը: Իրականում, այդ ժամանակ օֆերտա չկար, բայց հայտարարությունից հետո ստիպված եղան որոշ ժամանակ անցում կատարել օֆերտայի: Եվ ընդամենը երեք ամիս է, ինչ տարին սկսվել է, բայց պետպատվերով ծառայությունների համար նախատեսված բյուջեն գերակատարվել եւ սպառվել է: Ավանեսյանը կառավարության նիստից հետո խոստովանել էր, որ հավելյալ միջոցների կարիք կա, պետք է հերթագրման համակարգ գործի: Մեզ հայտնի դարձավ, որ այս հայտարարությունից հետո արդեն սահմանափակումները գործարկվել են, ընդ որում՝սահմանափակումները սկսել են ներմուծվել «շուստրի» եղանակով. օրինակ՝սկզբից՝սկսել է Armed ծրագիրը «կախել», ոչ լիարժեք կերպով աշխատել, եւ բուժհաստատությունները չէին կարողանում որեւէ հայտ բացել, որեւէ այց գրանցել, իսկ հետո՝արդեն շատ կոնկրետ սկսել են գործել սահմանափակումներ՝ դժվարամատչելի ծառայությունների մասով:

Սա լուրջ խնդրի առաջ է կանգնեցրել բուժհաստատություններին, քանի որ բուժայցելուներին արդեն կանչել են, հետազոտությունները, վիրահատությունները պլանավորել, իսկ այժմ ստիպված են նրանց ուղարկել տուն, եւ կրկին հերթագրում իրականացնել: Երեկվանից բուժհաստատություններում քաոս է:



Արցախը հանձնելուց հետո Հայաստանի իշխանությունները արհամարհում են Արցախի վտարանդի կառավարությանը եւ տարբեր պատրվակներով հրաժարվում են հանդիպել նրանց հետ: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝Արցախի բռնի տեղահանումից եւ Հայաստան տեղափոխվելուց հետո՝Արցախի իշխանությունները պարբերաբար փորձել են կապ հաստատել հայաստանյան իշխանությունների հետ եւ հանդիպումներ նախաձեռնել՝ի վերջո հասկանալու՝ինչ ճակատագիր է սպասվում Արցախին, բռնի տեղահանված քաղաքացիներին, արդյոք Արցախի մասով բանակցություններ վարելու ռեսուրս կա: Սակայն, ՀՀ իշխանությունները ամեն անգամ տարբեր պատճառաբանություններով մերժել են մի սեղանի շուրջ նստելու ու խոսելու առաջարկները: Ընդ որում, մեր տեղեկություններով՝երկխոսելու այս ձախողված փորձերը Արցախի տարբեր պաշտոնյաների կողմից են եղել՝Սամվել Շահրամանյանն իր հերթին է դիմել ՀՀ իշխանություններին, Արցախի ԱԺ նախագահի (նախագահը՝Բաքվի բանտում) տեղակալ Գագիկ Բաղունցն իր հերթին է դիմել Ալեն Սիմոնյանին, Արցախի պատգամավորներն էլ եւս փորձեր արել են, սակայն հայաստանյան իշխանությունները, հավանաբար ասելիք չունենալու պատճառով, մերժել են Արցախից տեղահանված իշխանության ներկայացուցիչների հետ հանդիպման առաջարկները: Թերեւս, սա ՔՊ-ականների դեպքում ինչ-որ չափով հասկանալի է. իսկ ի՞նչ պետք է նրանք ասեն արցախցիներին, եթե ոչ միայն փակ են համարում այլեւ Արցախի թեման, այլ նաեւ Արցախի հետ կապված ցանկացած բան սպառնալիք են համարում Հայաստանի համար ու հիմա էլ փորձում  են այնպես անել, որ հայերը մոռանան Արցախի կորստի մասին՝ջնջելով «Արցախ» անունը ժողովրդի հիշողությունից:




Վերջին ժամանակներում բոլոր պետական-պաշտոնական կայքերում հայտնվել է մի պատուհան՝«Ազդարարի՛ր», որը հորդորում է քաղաքացիներին հաղորդում ներկայացնել բոլոր անօրինությունների մասին՝անանուն: Հենց այս կայքից տեղեկանում ենք, որ Ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակի միջոցով, «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ազդարարը կարող է անանուն եղանակով հաղորդել տեղեկություններ՝կոռուպցիոն դեպքի մասին: Միասնական էլեկտրոնային հարթակի միջոցով ՀՀ-ն՝ի դեմս ՀՀ արդարադատության նախարարության, երաշխավորում է ազդարարի պաշտպանությունը՝ապահովելով նրա անանունությունը: Հանրության շրջանում ձեւավորված կարծիք կա, որ համակարգը ստեղծվել է «գործ տալու» համար, եւ անանուն հաղորդում ներկայացնողները «գործ տվողներ» են: Ազդարարման էլեկտրոնային համակարգի մասին սակավ տեղեկատվության պատճառով դիմեցինք արդարադատության նախարարություն՝պարզելու՝ինչ ֆինանսական աղբյուրներից է սնուցվում այս համակարգը եւ ինչ գործունեություն է պատրաստվում իրականացնել: «2019 թվականի հունվարի 19-ին ֆինանսների նախարարությունը եւ արդարադատության նախարարությունը մի կողմից՝որպես հաճախորդներ, եւ Joint Venture Avenue Consulting Group LLC-ն եւ AI Partnership LLC-ն մյուս կողմից՝որպես ծառայություն մատուցողներ, կնքել են էլեկտրոնային հարթակի գործարկման ապահովման համար մատուցվող վճարովի ծառայության պայմանագիր»,- հայտնել են նախարարությունից: ***Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:***




Առողջապահության նախարարությունը, որի շուրջ սկանդալը քայլերով գնում է դեպի Էկոնոմիկայի նախարարության «արահետով», չի դադարում ուշադրության կենտրոնում մնալուց: Լուրերը, թե առողջապահության նախարարությունում քննչական գործողությունները իրականացվել են կեղծ դեղերի եւ պետպատվերների տրամադրման պատճառով, ավելի խոր արմատներ են գցում: «Ժողովուրդ» օրաթերթը օրվա ընթացքում 4-5 զանգեր է ստացել, եւ ահազանգերի պատճառը մեկն էր՝պետպատվերների չեղարկումը: Ահազանգողները պնդում էին, որ որոշ հիվանդանոցներ չեղարկում են պետպատվերով ծառայությունները, հերթագրված ստուգումներն ու վիրահատությունները եւ հորդորում սպասել: Հարցն այն է, որ կա հրատապության եւ առաջնահերթության խնդիր. հիվանդները սպասել չեն կարող, այդ գումարից է կախված սեփական կյանքն ու առողջությունը: Ահազանգին ընթացք տալով՝փորձեցինք առողջապահության նախարարությունից ստանալ համապատասխան մեկնաբանությունը, որի մասով էլ մեզ արձագանքեցին, թե տեղեկություններն իրականությանը չեն համապատասխանում: «Նման բան չկա: ՀՀ կառավարության՝2023 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 2344-Ն որոշման համաձայն՝այս տարվա հունվարի 1-ից փորձարարական եղանակով, 6 ամիս ժամկետով պայմանագրային գումարի չսահմանափակման (օֆերտայի) սկզբունքով փոխհատուցվող 43 միջոցառումներից/ենթամիջոցառումներից 2-ը՝համաձայն ՀՀ կառավարության՝2004 թվականի մարտի 4-ի թիվ 318-Ն որոշման հավելված 4-ի 3-րդ կետի 1-ին ենթակետի՝սույն թվականի ապրիլի 17-ից սկսած իրականացվում են հերթագրման սկզբունքով, առողջապահության նախարարի կողմից հաստատված ընթացակարգով: ***Մանրամասները՝ ArmLur.am կայքում:***

ԾԱՌԱՅՈՒՄ ԵՆ ՀԱՅԱՏՅԱՑ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ

# «ԵՐԿԻ՞Ր ԵՆՔ, ԹԵ՞ ՓՈՂՈՑ». Լ. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

**«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ՀՀ առաջին ՄԻՊ Լարիսա Ալավերդյանը, անդրադառնալով ՔՊ-ական պատգամավորի հետ վիճաբանության բռնված քաղաքացու խոշտանգման դեպքին, նշում է՝ սա ահաբեկչություն է պետության դեմ:**



**-Տիկի՛ն Ալավերդյան, ինչպե՞ս կբնութագրեք քաղաքացի Սամվել Վարդանյանի հետ տեղի ունեցած ծեծի դաժան միջադեպը, ինչպե՞ս որակել կատարվածը՝ ըստ Ձեզ:**

-Սա պետական ահաբեկչություն է, ես այլ խոսք չեմ գտնում, որովհետեւ դաժան վերաբերմունք ասվածը չի ենթադրում, որ հատուկ պատկան մարմնի ներկայացուցիչը, այն է՝ ոստիկանը, թույլ տա, որ ինչ-որ անհայտ մարդիկ նման հանցանքներ գործեն. երկի՞ր ենք, թե՞ փողոց:

Ես չեմ ճանաչում այդ պատգամավորին եւ նրան չեմ բնութագրում, բայց իր գործողություններն ու կեցվածքը, ինչպես Ժողովուրդն է ասում, փողոցային են: Ես բնութագրում են իր կեցվածքը, որ, լինելով իշխանության ներկայացուցիչ, իրեն թույլ է տալիս բաներ, որոնք հատուկ են այլ խավի: Նա որպես պատգամավոր է հանդես գալիս, որպես պետության ներկայացուցիչ:

Նման դեպքերում, երբ լռեցյալ պայմանավորվածությամբ, պետական մարմնի ներկայացուցիչները՝ հանձինս ոստիկանների, թույլ են տալիս, որ անհայտ մարդիկ մտնեն ոստիկանական մեքենա, ապա պետք է պատժվեն: Այդ անձնավորությունը այսօր պետք է դատի տա ոստիկանությանը: Չպետք է մոռանալ, որ նրանք հանդես են գալիս որպես պետական մարմնի ներկայացուցիչներ: Այս իշխանությունը՝ հանձինս իր պատգամավորների, գործադիր մարմնի որոշ ներկայացուցիչների, իրենց կեցվածքով եւ գործողություններով սպասարկում են թուրք-ադրբեջանական հայատյաց եւ ցեղասպան քաղաքականությունը:

Այս քայլով զրոյի հավասարեցվեց ոստիկանության արժանապատվությունը, ինչի համար շատ ցավում եմ, քանի որ ցանկացած երկրում ոստիկանությունը ներքին անվտանգությունն ապահովելու գործառույթ ունի: Այս դեպքում հենց իրենք են դա խախտել:

Պահանջում եմ՝ առաջին հերթին հայտնաբերել եւ պատասխանատվության ենթարկել հայորդու նկատմամբ թշնամու կեցվածք դրսեւորած ոստիկաններին: Ապա նախարարությունը պետք է բացահայտնի, թե ովքեր են եղել դիմակավորված մարդիկ, քանի որ եթե օրը ցերեկով կարելի է մարդուն դուրս բերել մեքենայից ծեծել, ջարդել եւ վերադարձնել մեքենա, ապա նշանակում է՝ երկրում գործում է թշնամական առնվազն մեկ խումբ, որի գործողությունները գործադիր իշխանության կողմից չեն պատժվում:

Սա պետության եւ պետական անվտանգության դեմ հանցագործություն է:

**-Իշխանությունը ասում է, որ որեւէ ապացույց չկա, թե հանցագործություն կատարած անձինք որեւէ կերպ կապված են իրենց հետ:**

-Դա փաստ է այն մասին, որ ՆԳՆ աշխատողներն իրենց տեղում չեն. եթե այսքան ակնհայտ հանցագործության դեպքում չեն կարողանում գործը բացահայտել, ուրեմն պետք է հրաժարական տան եւ իրենց տեղը զիջեն ավելի փորձառու մասնագետների:

**-Հաշվի առնելով իրավապաշտպանների այն կարծիքը, որ այդ անձինք փոխկապակցված են իշխանության հետ, կբացահայտվի՞ արդյոք դեպքը:**

-Կարծում եմ, որ մենք հմուտ իրավաբաններ եւ դատապաշտպաններ ունենք, որոնք այդ հարցը կկարողանան հասցնել մինչեւ Եվրոպական դատարան՝ առնվազն եւ կրկնում եմ, որ միայն այդ անձինք չեն, որ մեղավոր են:

**- Ի՞նչ շահ կա նրանից, որ գործը հասնի Եվրոպական դատարան:**

-Եվրոպական դատարանում չեն նայում նյութական գործին, այլ հետեւում են, թե գործն ինչպես է ընթանում, դատական, իրավական ինչ գործողություններ են տեղի ունենում, հետեւաբար՝ միայն ոստիկանության այն հայտարարությունը, որ չեն կարողանում գտնել հանցագործներին, կարող է որոշիչ դեր խաղալ:

Իրեն ժողովրդավար ներկայացնող իշխանության համար սա խարան է, երբ էլ որ լինի:

**-Տիկի՛ն Ալավերդյան, երկու հակադիր երեւույթների ենք ականատես լինում, երբ ԱԺ նախագահը քաղաքացու վրա թքեց մնաց անպատիժ, իշխանական խմբակցության քարտուղարը եթերից ոտք ու ձեռք կտրելու սպառնալիք հնչեցրեց, եւ կրկին մնաց անպատիժ, սակայն իշխանության ներկայացուցչի հետ վեճի բռնված քաղաքացին խոշտանգումների է ենթարկվում:**

-Նրանք, առաջին հերթին, վախկոտ են, հակառակ դեպքում՝ ԱԺ նախագահի պաշտոնը զբաղեցնող մարդը չէր հրամայի քաղաքացու ձեռքերը բռնեն, ապա մոտենար ու թքեր: Երկրորդ հերթին՝ կարեւոր է մարդու հիմնական դաստիարակողը՝ մայրը, որը այս դեպքում իր բարկությունը նույն կերպ է արտահայտում:

Ըստ երեւույթին, այս մարդիկ պատահական են այս պաշտոններին հասել: Հակառակ դեպքում՝ կիմանային իրենց ինչպես պիտի պահեն:

*Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ*

ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 202

# ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԴՊՐՈՑՆԵՐ ԵՆ ՓԱԿՎՈՒՄ

**2024թ., հունվարի 20-ին Վայք քաղաքում Նիկոլ Փաշինյանը հայտարարեց. «Այսօր հանրապետությունում ոչ մի դպրոց չի փակվում, այսօր դպրոց է կառուցվում»: «Ժողովուրդ» օրաթերթը արձանագրեց, որ իրականում Հայաստանում դպրոցներ, իհարկե, կառուցվում-վերանորոգվում են, սակայն նաեւ փակվում են, լուծարվում, եւ շենքերը՝ վաճառվում:**

Մասնավորապես՝ կառավարության՝ 17.08.2023թ. նիստում որոշում կայացվեց Լոռու մարզի Վանաձոր համայնքի՝ Վանաձոր ք. Թեւոսյան փողոցի № 7 դպրոց հասցեում գտնվող 3 059.82 քառ. մետր մակերեսով շենք-շինությունները եւ դրա զբաղեցրած, օգտագործման ու սպասարկման համար հատկացված 0.49382 հեկտար մակերեսով հողամասը օտարել: Հիմնավորման մեջ նշվում է, որ գույքը նախկինում օգտագործվել է որպես դպրոց, սակայն 2-3 տարի է, ինչ չի շահագործվում:

24.08.2023թ., կառավարությունը որոշում կայացրեց փակել «Գուգարքի ավագ դպրոց» ՊՈԱԿ-ը եւ միացնել «Գուգարքի հիմնական դպրոց»-ին:

Հիմնավորման մեջ նշվում է, որ «Գուգարքի ավագ դպրոց» ՊՈԱԿ-ն իր առաքելությունը լիարժեք չի իրականացնում: ՊՈԱԿ-ը նախատեսված է շուրջ 460 սովորողի համար, սակայն սովորում է 23 աշակերտ. տարեցտարի դպրոցում գրանցվել է սովորողների թվի նվազում (2015-2016 ուստարում դպրոցն ունեցել է 107 աշակերտ, 2019-2020 ուստարում՝ 38 աշակերտ, 2022-2023 ուստարում՝ 23):

10.01.2024թ., ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Միհր Ենոքյանը ֆեյսբուքյան էջում գրեց. «2023 թվականի սեպտեմբերի 11-ի N 1790-Ա/2 հրամանով՝ այսպես կոչված՝ «Հայաստանի Հանրապետության կրթական որակյալ ծառայությունների հասանելիության ապահովման ծրագրի» համաձայն՝ Շիրակի մարզում փակվելու են 40-ից ավելի դպրոցներ, որոնցից մի քանիսը գտնվում են սահմանամերձ գյուղերում»:

20.01.2024թ., 168.am-ի խմբագրությանն էր դիմել Շիրակի մարզի Ամասիայի տարածաշրջանի Մեղրաշատ գյուղի բնակչուհի Ռուզաննա Սամվելյանը՝ ահազանգելով, որ կառավարությունը որոշել է փակել իրենց գյուղի դպրոցը եւ միավորել հարեւան գյուղի դպրոցի հետ: Ընդ որում, երեք գյուղերի՝ Մեղրաշատի, Բյուրակնի ու Ողջիի դպրոցները:

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2025-2026 թվականներին:

*ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ*

## «ՉՊԵՏՔ Է ՍՊԱՍԵՆՔ ԵՎՍ ՄԵԿ ԴԱՐ». ԱՆՆԱ ԷՇՈՒ

ԱՄՆ Ներկայացուցիչների պալատում Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին եւ Լեռնային Ղարաբաղի արդարության պահանջին նվիրված նիստում ելույթ են ունեցել ցեղասպանությունը վերապրածների ժառանգները: ԱՄՆ Կոնգրեսի ներկայացուցիչների պալատի՝ հայ-ասորական ծագում ունեցող անդամ Աննա Էշուն հայտարարել է. «Մենք չպետք է սպասենք եւս մեկ դար՝ Ադրբեջանին պատասխանատվության ենթարկելու՝ հայ ժողովրդի դեմ կատարած հանցագործությունների համար»:

Նա հիշեցրել է Լեռնային Ղարաբաղի հայերի էթնիկ զտման, ամիսներ շարունակ նրանց շրջափակման մեջ պահելու Ադրբեջանի իշխանությունների գործողությունները: «Ես կոչ եմ անում ԱՄՆ պետքարտուղարությանը՝ դադարեցնել ռազմական օգնությունն Ադրբեջանին, պատժամիջոցներ սահմանել այդ հանրապետության պաշտոնյաների նկատմամբ՝ մարդու իրավունքի կոպիտ խախտումների համար եւ օգնել Լեռնային Ղարաբաղից 120 հազար բռնի տեղահանվածներին», - կոչ է արել Աննա Էշուն:

Իրենց ելույթներում Ցեղասպանությունը վերապրածների ժառանգները կոչ են արել ԱՄՆ-ի իշխանություններին ընդունել նաեւ Հայոց ցեղասպանության կրթական ակտը (HR2803):

## ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԼՍՈՒՄՆԵՐ ԿԼԻՆԵՆ

Մայիսի 10-ին խորհրդարանական լսումներ կլինեն, որոնք նախաձեռնել է Ազգային ժողովի աշխատանքի եւ սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի Հերիքնազ Տիգրանյանը:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ լսումները լինելու են «Կամավոր աշխատանքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի եւ հարակից օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ:

Լսումներին մասնակցելու է նաեւ Հայաստանի Հանրապետության աշխատանքի սոցիալական հարցերի նախարար տեղակալ Ռուբեն Սարգսյանը:

## ԱՎՍՏՐԻԱՆ ԻՐ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ Է ՀԱՅՏՆԵԼ

Ավստրիայի խորհրդարանը ապրիլի 17-ին միաձայն բանաձեւ է ընդունել՝ աջակցություն Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվածների, որոնք փախել են Ադրբեջանի հարձակման պատճառով:

Բանաձեւը կոչ է անում պաշտպանել խոցելի խմբերի, կանանց եւ երեխաների իրավունքները, պահպանել հայկական մշակութային ժառանգությունը Լեռնային Ղարաբաղում, ինչպես նաեւ աջակցել Հայաստանում Եվրամիության դիտորդական առաքելությանը:

## ՎԵՐԱԴԱՐՁԻ ՀԱՐՑԸ

ՌԴ ԱԳՆ ներկայացուցիչ Մարիա Զախարովան ամենշաբաթյա ճեպազրույցում շոշափել է նաեւ Լեռնային Ղարաբաղի տարածքից տեղահանված հայ բնակչության վերադարձի հարցը:

«Ինչ վերաբերում է Ղարաբաղի տարածքը լքած հայ բնակչությանը, ապա Ադրբեջանի իշխանություններն ընդունել են վերաինտեգրման հատուկ ծրագիր, ՌԴ-ն ողջունում եւ աջակցում է այդ քայլը: Ղարաբաղի հայերը պետք է կարողանան տարածաշրջան վերադառնալ իրենց իրավունքների եւ, իհարկե, անվտանգության պատշաճ ապահովման դեպքում: Մենք պատրաստ ենք ամեն կերպ աջակցել այս գործընթացին»,- ասել է նա:

Խոսելով 80-ականների վերջի եւ 90-ականների սկզբի հակամարտության արդյունքում Հայաստանից հեռացած ադրբեջանցիների, ինչպես նաեւ այդ նույն ժամանակ Բաքուն, Սումգայիթը եւ ադրբեջանական այլ քաղաքներ լքած հայերի մասին՝ Զախարովան ընդունել է, որ այդ կատեգորիայի քաղաքացիների հնարավոր վերադարձի պայմաններ ստեղծելու համար անհրաժեշտ է մեծ ծավալի աշխատանք կատարել, համակողմանի կարգավորել հայ-ադրբեջանական հարաբերությունները, երկու երկրի միջեւ ձեւավորել վստահության մթնոլորտ, իրականացնել եռակողմ հայտարարությունների դրույթները, կնքել խաղաղության պայմանագիր, ապաշրջափակել տրանսպորտային հաղորդակցությունները տարածաշրջանում, սահմանազատել եւ սահմանագծել սահմանը, կանոնավոր շփումներ հաստատել քաղաքացիական հասարակությունների միջեւ:

«Ժողովուրդների հաշտեցման գործընթացի մեկնարկի մասին հնարավոր կլինի խոսել կատարված աշխատանքի արդյունքի հիման վրա: Մարդիկ պետք է կարողանան առանց վախենալու ճանապարհորդել հարեւան երկիր ու բնակվել նրա տարածքում»,- եզրափակել է Զախարովան:

## ԿՇԱՐՈՒՆԱԿԻ ՄՆԱԼ ԿԱԼԱՆՔԻ ՏԱԿ

Հակակոռուպցիոն դատարանը մերժել է ՀՀ պաշտպանության նախկին նախարար Դավիթ Տոնոյանի խափանման միջոցը փոխելու վերաբերյալ միջնորդությունը. Դավիթ Տոնոյանը կշարունակի մնալ կալանավորված:

Պաշտպանական կողմը պատրաստվում է դիմել վերաքննիչ դատարան:

Հիշեցնենք՝ 2021 թվականի սեպտեմբերի 30-ին ԱԱԾ-ն հայտնեց, որ Դավիթ Տոնոյանն ու զենքի մատակարարմամբ զբաղվող Դավիթ Գալստյանը ձերբակալվել են առանձնապես խոշոր չափերի հափշտակություն կատարելու կասկածանքով. նույն օրը Տոնոյանն ու Գալստյանը կալանավորվեցին:

Այս գործով մեղադրանք է առաջադրվել նաեւ ԳՇ նախկին պետ Արտակ Դավթյանին, ԳՇ պետի նախկին տեղակալ Ստեփան Գալստյանին, ՀՀ ՊՆ ավիացիայի վարչության ավիացիոն տեխնիկական ունեցվածքի ծառայության պետ Արտյոմ Համբարյանին եւ ավիացիայի վարչության գլխավոր ինժեներ Վլադիմիր Բաբայանին:

Ստեփան Գալստյանը 2023 թվականի դեկտեմբերին ազատ արձակվեց՝ 25 մլն դրամ գրավի դիմաց:

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱԳՐԵՍԻՎ Է

# Ի՞ՆՉ ԽՆԴԻՐ ԵՆ ԼՈՒԾԵԼ ԱՐՑԱԽՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ

**ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր Հասմիկ Հակոբյանը, օրերս իր հարցազրույցներից մեկում անդրադառնալով «Ֆրիդոմ Հաուսի» զեկույցում արձանագրված ժողովրդավարական հետընթացին, այն կապել է Արցախից տեղահանվածների խնդիրների հետ՝ ասելով, որ պետական իշխանության մարմինները զբաղված էին տեղահանվածների հարցերով ու դանդաղել են ժողովրդավարությունը զարգացնելու հարցում:**



ArmLur.am-ի հետ զրույցում Արցախի ԱԺ պատգամավոր Մետաքսե Հակոբյանը, արձագանքելով Հասմիկ Հակոբյանի հայտարարություններին, նկատում է՝ մինչ 2018 թվականը Արցախը ոչ մի խնդիր չուներ, Հայաստանը՝ առավել եւս. 2020 թվականից հետո իշխանությունների վարած քաղաքականության արդյունքում՝ Արցախը կորավ խնդիրների մեջ. «Հենց այս իշխանությունների ձեռքով Արցախը հանձնվեց, իրենց նախաձեռնությամբ մենք տեղահանվեցինք մեր հայրենիքից, մեր տներից եւ հայտնվեցինք հայրենիքի մյուս հատվածում: Այսինքն՝ այս բոլոր խնդիրներն իրենք ստեղծեցին, էլ չեմ ասում, որ Արցախում այլեւս չկա ընտանիք, որը զոհ չունենա, եւ մեր վերքերը դեռ թարմ են»,-նշում է Մետաքսե Հակոբյանը:

Նրա խոսքով՝ իշխանություններն այն բոլոր խնդիրները, որոնք կան Հայաստանում, փորձում են բարդել արցախցիների վրա. «Սա իրենց օրակարգն է, որը բերել են 2018 թվականի իշխանազավթումից հետո, այսինքն՝ այն գլխից խնդիրների մեղավոր էին «կարգել» Արցախն ու արցախցիներին, հիմա էլ շարունակում են նույն քաղաքականությունը: Այսօր ՀՀ քաղաքացուն ոստիկանական բաժնում ստորացնում են, եւ դա հանրայնացվում է, եւ իրենք նորից արդարանում են ու մեղքը բարդում են արցախցիների վրա. ի՞նչ կապ ունեն արցախցիները իրենց ագրեսիվ ու ոչ ժողովրդավարական պետության հետ... Որեւէ կապ չեն կարող ունենալ: Ի՞նչ խնդիրներ են արցախցիների համար լուծել, որը շեղել է իրենց ուշադրությունը Հայաստանի Հանրապետության խնդիրներից, կամ որ դրանից ժողովրդավարությունը տուժել է. որեւէ խնդիր իրենք լուծո՞ւմ են արցախցիների համար:

Մեր գլխավոր նպատակը Արցախի վերադարձն է, որը հիստերիա է առաջացրել իշխանությունների մոտ, բայց իրենք որեւէ հարց չեն լուծում»,-ասում է Մետաքսե Հակոբյանը:

*ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ*

ՕՐՎԱ ԽԾԱՆԿԱՐ

## ԱՐՑԱԽՑԻ ՀԿ-Ն ⇨ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԿՈՒՆԵՆԱ

Արցախյան «Արդարություն եւ վերադարձ» հայ ազգային եւ մշակութային արժեքների պահպանման ՀԿ-ն շարունակում է «Արցախի երիտասարդության որոշիչ ձայնը» ծրագրի շրջանակներում հանդիպումներ ունենալ բռնի տեղահանված արցախցիների հետ:

Ծրագրի մեկնարկը տրվել էր մարտի 30-ին՝ Կապան քաղաքից, ապրիլի 6-ին «Արդարություն եւ վերադարձ» ՀԿ ներկայացուցիչները բռնի տեղահանված արցախցիների հետ Գյումրիում էին հանդիպել:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ հաջորդ կանգառը Կոտայքի մարզում է. ապրիլի 22-ին արցախցի պատգամավորները կլինեն Հրազդան քաղաքում. ««Արդարություն եւ վերադարձ» հայ ազգային եւ մշակութային արժեքների պահպանման ՀԿ-ի կողմից մշակված «Արցախի երիտասարդության որոշիչ ձայնը» ծրագիրը շարունակվում է:

Մենք շարունակում ենք այցելել մարզ առ մարզ, քաղաք առ քաղաք եւ լսել մեր արցախցի հայրենակիցների ձայնը: Խոսել արցախցիների մասին, ներկայացնել նրանց դժվարությունները: Փորձել ինչ-որ տարբերակով փոխել բռնի տեղահանված մեր հայրենակիցների կյանքն անհնար է, եթե դուք անձամբ չգիտեք, թե ինչ խնդիրների են նրանք բախվել, ինչպես են նրանք հաղթահարում ամեն օր իրենց կյանքը կեղեքող հազարավոր մարտահրավերները... Մենք շարունակում ենք լսել մեր հայրենակիցներին, մենք շարունակում ենք հավաքագրել այն բոլոր փաստերը, որոնց մասին վստահ ենք՝ շատերն են անտեղյակ:

Մեզ սպասում են եւս 8 մարզում բռնի տեղահանված հայրենակիցներ, որոնց հետ քննարկելու ենք բոլորիս ներկայի եւ ապագայի վերաբերյալ օր օրի ավելի ահագնացող հիմնախնդիրները:

Հաջորդիվ՝ մենք կլինենք Կոտայքի մարզկենտրոն Հրազդան քաղաքում: Հանդիպում ենք ապրիլի 22-ին՝ ժամը 18:30-ին:

Հանդիպման վայրը՝ «Իմպերիալ» ռեստորան: ՄԻԱՍԻՆ ՄՇԱԿՈՒՄ ԵՆՔ ԱՐՑԱԽ ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՒ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԸ»,- «ֆեյսբուքում» այս մասին հայտնել է Արցախի պատգամավոր Մետաքսե Հակոբյանը:

## ԲՆԱԿԻՉՆԵՐԸ ԶԳՈՒՇԱՎՈՐ ԵՆ ԴԱՐՁԵԼ

Ապրիլի 17-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը այցելել էր Տավուշի մարզ: Վարչապետը եղել է Ոսկեպար, Կիրանց եւ Բերքաբեր բնակավայրերում:

ArmLur.am-ի հետ զրույցում Ոսկեպարի համայնքապետարանի աշխատակիցներից մեկը ասաց, որ հանդիպումը բնականոն է անցել: Քննարկվել են սահմանային հարցեր:

Նրա խոսքով՝ առաջին անգամ հանդիպման ժամանակ բնակիչները պահանջ էին ներկայացրել վարչապետին, նա խոստացել էր, որ կվերադառնա եւ կպատասխանի գյուղացիների առաջարկին, եւ հանդիպման ժամանակ չեն եղել հարցեր, որոնց պատասխանը չի հնչել:

Հանդիպման ընթացքում հավաքվել են բնակիչների հեռախոսները, աշխատակցի խոսքով՝ անվտանգությունից ելնելով:

«Փաշինյանի այցից հետո բնակիչները դարձել են մի քիչ զգուշավոր ու լավատես»,-ասաց համայնքապետարանի աշխատակիցը:

Հիշեցնենք, որ Նիկոլ Փաշինյանը, երբ մարտի 18-ին այցելել էր Ոսկեպար, բնակիչների խոստացել էր, որ 10 օրից կրկին կվերադառնա, բայց այցելեց մեկ ամսից:

*Ք. ՄՈՒՇԵՂՅԱՆ*

ՀԱՆՑԱՎՈՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

# ԳՈՒՅՔԻ ՀԱՓՇՏԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ

**ՀՀ քննչական կոմիտեի՝ Երեւան քաղաքի քննչական վարչության ծանր հանցագործությունների քննության բաժնում իրականացված քննչական եւ վարութային մեծածավալ գործողությունների, ոստիկանության աշխատակիցների կողմից կատարված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել են Արմավիրի մարզում զինված հարձակմամբ առանձնապես խոշոր չափերով գույքի հափշտակության դեպքի մի շարք հանգամանքներ:**

Քննությամբ ձեռք բերված փաստական տվյալների համաձայն՝ Ա.Ս.-ն, մի խումբ անձանց հետ, մասնակից է դարձել զենքի գործադրմամբ հարձակմամբ առանձնապես ծանր հանցագործություն կատարելու նպատակով ստեղծված հանցավոր կազմակերպությանը: Վերջինիս կազմում Ա.Ս.-ն, քննությամբ դեռեւս չպարզված աղբյուրից, նախապես տեղեկացել է ՌԴ-ում բնակվող անձին պատկանող, առանձնապես խոշոր չափի՝ 1.024.000.000 ՀՀ դրամ արժողությամբ 36 կգ քաշով 999 հարգի ոսկյա ձուլակտորները եւ 1.216.000.000 ՀՀ դրամին համարժեք 293.000.000 ՌԴ ռուբլի գումարը մեկ այլ անձի՝ Դ.Ի.-ի կողմից 2024թ. ապրիլի 10-ին ՌԴ-ից «Զվարթնոց» օդանավակայանով ՀՀ տեղափոխելու մտադրության մասին: Հանցավոր կազմակերպության մի շարք անդամների հետ զենքի գործադրմամբ բռնություն գործադրելով՝ հափշտակելու նպատակով նախապես պլանավորել եւ հստակ դերաբաշխել են հանցավոր կազմակերպության անդամներից յուրաքանչյուրի գործողությունները:

Հանցավոր մտադրությունն իրագործելու, մասնակիցների հնարավոր շարժը քողարկելու եւ չբացահայտվելու նպատակով Ա.Ս.-ն եւ հանցավոր կազմակերպության մյուս անդամները 2024 թ. ապրիլի 10-ին Երեւան քաղաքի փողոցներից մեկում կայանված «Պորշ» մակնիշի ավտոմեքենայի վրայից հափշտակել են պետհամարանիշները, այն ամրացրել են իրենց կողմից շահագործվող «Պորշ» մակնիշի ավտոմեքենայի վրա եւ ընթացել «Զվարթնոց» օդանավակայանի ուղղությամբ՝ դարանակալելով Արմավիրի մարզի Փարաքար համայնքի խաչմերուկներից մեկում:



Դ.Ի.-ի՝ ՀՀ ժամանելու փաստը հաստատելու եւ փաստաթղթային ստուգումներն ավարտելու մասին հանցակիցներին տեղեկատվություն տրամադրելու նպատակով՝ կազմակերպության անդամներից մեկը նույն օրը՝ ժամը 07:03-ից մինչեւ 07:13-ն ընկած ժամանակահատվածում, գտնվել է «Զվարթնոց» օդանավակայանի ժամանման սրահում: Տեղեկանալով օդանավի վայրէջք կատարելու ժամի մասին եւ օդանավակայանից «Հունդայի Սոնատա» մակնիշի ավտոմեքենայով դեպի «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի «Կարգո» բեռնային համալիրի ուղղությամբ Դ.Ի.-ի ընթանալու մասին՝ տեղեկացրել է հանցակիցներին:

Վերջիններս «Պորշ» մակնիշի ավտոմեքենայով հետապնդել են «Հունդայի Սոնատա» մակնիշի ավտոմեքենային եւ ժամը 07:15-ից մինչեւ 07:20-ն ընկած ժամանակահատվածում Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Մայրաքաղաքային փողոցի դիմաց արհեստական խոչընդոտ ստեղծելով՝ դիմացի աջ դռան պատուհանից, զենքի գործադրման սպառնալիքով, կանգնեցրել են նշված ավտոմեքենան: Կանգնեցնելուց հետո ենթադրյալ հանցագործությունը կատարած անձինք, ԱԱԾ աշխատակիցների համազգեստին նմանվող համազգեստով եւ դիմակավորված, դուրս գալով ավտոմեքենայից՝ ներկայացել են իբրեւ ՀՀ ԱԱԾ աշխատակիցներ եւ ավտոմեքենայում գտնվող 3 անձի նկատմամբ զենքի գործադրմամբ բռնություն գործադրելով՝ նրանց դուրս են բերել ավտոմեքենայից, թմրամիջոց ու այլ արգելված իրեր փնտրելու եւ նրանց ձերբակալելու պատրվակով անցկացրել են ձեռնաշղթաներ, ապա ավտոմեքենայից հափշտակելով առանձնապես խոշոր չափի՝ 36 կգ քաշով 999 հարգի ոսկյա ձուլակտորները եւ 293.000.000 ՌԴ ռուբլի գումարի պարունակությամբ պայուսակները, հիշյալ անձանց նկատմամբ բռնություն գործադրելով, նստեցրել են նույն ավտոմեքենան, դիմացի դռնից արցունքաբեր գազ փչելով ավտոմեքենայի մեջ՝ «Պորշ» մակնիշի ավտոմեքենայով դիմել են փախուստի:

Այնուհետեւ, հանցավոր կազմակերպության անդամները գնացել են Արմավիրի մարզի գյուղերից մեկում գտնվող հանքի տարածք, ավտոմեքենայով բարձրացել են բլուրների մոտ, որտեղ «Պորշ» մակնիշի ավտոմեքենան թաքցնելու նպատակով, այն կայանել են բլրի մեջ տեխնիկայի միջոցով նախապես իրենց հրահանգով փորված անցքի մեջ, եւ նույն տեխնիկայով ավտոմեքենան ամբողջությամբ ծածկել են հողով՝ քողարկելով այն: Այդ ընթացքում հանցավոր կազմակերպության մասնակիցներից մեկը, հանցագործության բացահայտմանը խոչընդոտելու նպատակով, անջատել է տարածքը տեսանկարահանող սարքերի տեսաձայնագրությունների հիշողության կրիչի պարունակությամբ սարքը: Այնուհետեւ, հանցավոր կազմակերպության անդամները հանքի տարածքում գտնվող տարբեր ավտոմեքենաներով դիմել են փախուստի:

Ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա՝ Ա.Ս.-ին մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 319-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, 252-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին եւ 4-րդ կետերով, 456-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով: Քրեական վարույթի շրջանակներում քրեական հետապնդում է հարուցվել ընդհանուր 12 անձի նկատմամբ, որոնցից 5-ի նկատմամբ խափանման միջոց է կիրառվել կալանավորումը, 3-ի նկատմամբ՝ այլ խափանման միջոցներ, 4 անձի ձերբակալելու որոշում է կայացվել, եւ ոստիկանությանը տրվել է նրանց հայտնաբերելու եւ վարույթն իրականացնող մարմնին ներկայացնելու հանձնարարություն:

Նախաքննության ընթացքում կատարված մի շարք խուզարկությունների արդյունքում հայտնաբերվել է գողոնի մի մասը:

ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ

## ԴՐԱՄԱՀԱՎԱՔ՝ ԱԶԱՏ ԱՐՁԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Երեւան քաղաքում՝ երթուղային տրանսպորտում, ապրիլի 15-ին տեղի ունեցած առերեւույթ խուլիգանության դեպքի առթիվ ՀՀ Քննչական կոմիտեի ԵՔՔՎ ծանր հանցագործությունների քննության բաժնում նախաձեռնված քրեական վարույթով նախաքննությունը շարունակվում է: ՀՀ ՔԿ-ից հայտնում են, որ վարույթի շրջանակներում իրականացված քննչական եւ վարութային գործողությունների արդյունքում փաստական տվյալներ են ստացվել այն մասին, որ 2024 թվականի ապրիլի 15-ին՝ ժամը 14:10-ից 14:30-ն ընկած ժամանակահատվածում, Երեւան քաղաքի 30-ամյա բնակիչ Ս.Վ.-ն Երեւան քաղաքի Քրիստափոր-Արշակունյաց փողոցների խաչմերուկում՝ թիվ 42 երթուղային ավտոբուսի մեջ, մոտեցել է նույն ավտոբուսում գտնվող ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր, Հակոբ Ասլանյանին:

Հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործմամբ՝ տեսագրելու եւ տարածելու նպատակով միացնելով բջջային հեռախոսի տեսախցիկը՝ այն պահել է Հակոբ Ասլանյանի ուղղությամբ եւ քաղաքական հայացքներով պայմանավորված՝ Հակոբ Ասլանյանին եւ նրա ներկայացրած կուսակցության անդամների նկատմամբ ատելություն, անհանդուրժողականություն եւ թշնամանք հրահրելուն ուղղված հրապարակային խոսք հնչեցնելով, ինչպես նաեւ հասարակության նկատմամբ անհարգալից՝ իրավական եւ բարոյական նորմերի նկատմամբ բացահայտ արհամարհական վերաբերմունք դրեւորելով, կատարել է խուլիգանություն:

Մասնավորապես՝ Ս. Վ.-ն Հակոբ Ասլանյանի հասցեին հնչեցրել է անպարկեշտ արտահայտություններ եւ, համակեցության կանոնների ցուցադրաբար անտեսմամբ, հակադրվելով եւ անտեսելով հանրային տրանսպորտում գտնվող անձանց՝ վիճաբանությունը դադարեցնելու հորդորները, խախտել է այդ անձանց անդորրը՝ շարունակելով վիճաբանությունը նաեւ իրեն դիտողություն արած անձանց հետ՝ արդարացնելով իր գործողությունները նրանով, որ Հ. Ասլանյանը հանդիսանում է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամ եւ ՀՀ ԱԺ պատգամավոր: Արդյունքում՝ երթուղային ավտոբուսի վարորդը Երեւան քաղաքի Խանջյան-Բյուզանդ փողոցների հատման հատվածում ստիպված դադարեցրել է երթեւեկությունը եւ պահանջել դուրս գալ երթուղայինից: Այդ կերպ Ս. Վ.-ն խոչընդոտել է հանրային տրանսպորտի բնականոն աշխատանքին: Ձեռք բերված փաստերի հիման վրա՝ Երեւանի 30-ամյա բնակչի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում եւ նրան ներկայացվել է մեղադրանք՝ ՀՀ քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 1-ին մասով եւ 329-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով:

Դատարանի որոշմամբ Ս. Վ.-ի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել տնային կալանքը եւ գրավը՝ 7մլն դրամի չափով. ի դեպ, գրավի առնչությամբ երեկ դրամահավաք է սկսվել՝ Սամվել Վարդանյանին ազատ արձակելու համար:

ՍԵՂԱԴՐԱՆՔ

# ՉԻ ՎԵՐԱՀՍԿԵԼ ՀԱՇՎԱՊԱՀԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ

**Լոռիկ Բաղիրյանին մեղադրանք է առաջադրվել աշխատանքի նկատմամբ անփույթ վերաբերմունքի համար:**

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ Լ. Բաղիրյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, 2006 թվականից զբաղեցնելով Վազաշեն համայնքի ղեկավարի պաշտոնը, հանդիսանալով պաշտոնատար անձ, պատասխանատու լինելով Վազաշեն համայնքի հաշվապահական հաշվառումը կազմակերպելու եւ ֆինանսական հաշվետվություններ ներկայացնելու համար, օժտված լինելով ֆինանսական եւ հաշվապահական գործունեությանը վերաբերող փաստաթղթերում առաջին կարգի ստորագրության իրավունքով, ծառայության նկատմամբ անփույթ վերաբերմունքի հետեւանքով չի կատարել իր պարտականությունները՝ համայնքի հաշվապահ Սեւակ Ղազարյանի նկատմամբ ունեցած վստահությունից ելնելով, ֆինանսատնտեսական գործառույթներն իրականացնելու նպատակով, վերջինիս է փոխանցել իր նույնականացման քարտը, որից հետո չի վերահսկել հաշվապահի կողմից կատարված գործարքների հսկությունը, որպիսի պայմաններում էլ, Սեւակ Ղազարյանը, օգտվելով վերահսկողության բացակայությունից, 2019 թվականի հունվարի 29-ից մինչեւ 2021 թվականի դեկտեմբերի 29-ն ընկած ժամանակահատվածում, նյութական շահ ստանալու դիտավորությամբ, համայնքապետարանի անվամբ գործող 900370000532 բանկային հաշվեհամարից իր անձնական բանկային հաշվահամարներին է փոխանցել ընդհանուր 32.810.019 ՀՀ դրամ, որից 5.430.000 ՀՀ դրամը հանդիսացել է նույն ժամանակահատվածում նրա օրինական վարձատրության գումարը, որից հետո տարբեր օրերի այլ անձանց բանկային քարտերին փոխանցումներ կատարելու միջոցով հիշյալ գումարը կանխիկացրել եւ յուրացրել է:

*Նյութերը՝ ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ*

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ ապրիլի 17-ից 18-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 124 դեպք, որից 10-ը՝ նախկինում կատարված:*

ՄԱՐԶ

## ՏՈՒՐԻԶՄ ԵՆ ԶԱՐԳԱՑՆՈՒՄ՝ ՎԱԳՈՆՆԵՐՈՎ

Հայաստան-Վրաստան միջպետական ավտոճանապարհի Դիլիջանի ոլորաններում դարավանդը քերել, բնական ռելիեֆը աղճատել, ազատված տարածքում որպես սննդի, առեւտրի օբյեկտներ՝ խորհրդային տարիների մաշված վագոններ են տեղադրել: Այսպես 21-րդ դարում միջնակարգ մասնագիտական կրթությամբ, Եվրոպական համալսարանում հեռակա սովորող, ՔՊ կուսակցության Դիլիջանի կազմակերպության նախագահ, Դիլիջան խոշոր համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանի գլխավորությամբ՝ տուրիստական համբավ ունեցող Դիլիջանում զբոսաշրջություն են զարգացնում:

## ՓԱՇԻՆՅԱՆԻ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ

Նիկոլ Փաշինյանը «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության Ժողովրդավարության դպրոցում «Հայաստանի Հանրապետության սոցիալ-հոգեբանությունը» թեմայով դասախոսության ժամանակ, անդրադառնալով խորհրդային ժամանակաշրջանին եւ հիշեցնելով, որ ծնվել ու մեծացել է Իջեւանում, նշել է. «Մեր մանկական խոսակցություններում ամենաշատ հնչող բառերից մեկը Արցախն էր՝ 1984, 1985, 1986 թվականներին: Կարո՞ղ եք կռահել՝ ինչո՞ւ: Չեք կռահի: Ուրեմն, Իջեւանում ամենահայտնի էլիտար ռեստորանը Խորհրդային Միության ժամանակ կոչվում էր «Արցախ», եւ մինչեւ հասկացանք՝ ղարաբաղյան շարժումն էդ ինչի մասին է, մեր խոսակցության մեջ անընդհատ «Արցախը» ներկա էր՝ «Արցախում» էս է եղել, էն է եղել. իսկ դա այն ռեստորանն էր, որտեղ գնում էր Իջեւանի շրջանի էլիտան, եւ երեխեքը մտածում էին՝ որ մեծանանք, մենք էլ կգնանք «Արցախ» ռեստորան»: Իրականում «Արցախ» բառը մանկուց Նիկոլ Փաշինյանին հայտնի է եղել ոչ միայն որպես ռեստորանի անվանում: 13 տարեկան հասակում Նիկոլ Փաշինյանը Արցախին նվիրված հայրենասիրական բանաստեղծություն է ձոնել: Իջեւան քաղաքից բանաստեղծուհի Լուսինե Ենգոյանը 2020 թ.-ին «Վան Արյան» հրատարակչատանը տպագրել է «Իջեւանի մշակույթը 1970-ական թվականներից մինչեւ 2020 թվականը» գիրքը, որտեղ նա զետեղել է նաեւ Նիկոլ Փաշինյանի կողմից՝ 1988 թ.-ին՝ 13 տարեկանում գրած «Արցախ» բանաստեղծությունը: Անտիպ այդ բանաստեղծությունը Լ. Ենգոյանին է տրամադրել Նիկոլ Փաշինյանի խորթ մայրը՝ Երջանիկը: Ստորեւ 7 քառատողից բաղկացած բանաստեղծությունից 2 քառյակ.

Դուք Ղարաբաղ եք ասում այդ հողին,
Իսկ մենք՝ հայերս, ասում ենք՝ Արցախ:
Դուք, այդ ասելով, նմանվում եք գողի,
Իսկ մենք՝ հայկական, քաջարի, անվախ:

Մենք Ղարաբաղին, ո՛չ, աչք չենք դրել,
Ինչո՞ւ աչք դնել սեփական հողին,
Դուք մեր սահմանն այնքան եք հրել,
Որ ուզում եք տիրել Մեղրու խաղողին:

*ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ*
*Տավուշ*

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

# Ի՞ՆՉ ՈՒՆԵՑՎԱԾՔ ՈՒՆԻ ԺՈՐԱ ՉԻՉՈՅԱՆԸ

**ԱԺ ՔՊ պատգամավոր Հակոբ Ասլանյանի եւ քաղաքացի Սամվել Վարդանյանի միջեւ եղած միջադեպը վերջին օրերին բորբոքել է իշխանական կրքերը:**



Միջադեպից մեկ օր անց Սամվել Վարդանյանին ԶՊՎ տեղափոխելու ճանապարհին ծեծի են ենթարկել անհայտ անձինք:

Նրա կալանքի գործը մակագրվել է դատավոր Ժորա Չիչոյանին, ով տնային կալանք եւ 7 միլիոն դրամ գրավ է կիրառել:

Ինչպես հայտնի է, դատավոր Ժորա Չիչոյանը կալանքի որոշում կայացրեց 44-օրյա պատերազմում զոհված զինծառայող Ժորա Մարտիրոսյանի մոր՝ Գայանե Մարտիրոսյանի մասով, երբ նա վարչապետ Նիկոլ Փաշինյանի որդուն՝ Աշոտ Փաշինյանին, նստեցրել էր մեքենան, որպեսզի զրուցեն, ու այն վարել էր՝ նշելով, թե ցանկանում էին գնալ Եռաբլուր:

Երեւան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ժորա Չիչոյանը պաշտոնի նշանակվել է 2022 թվականի սեպտեմբերի 15-ին, իսկ հայտարարագիր ներկայացրել է մարտի 9-ին: Դատավոր Չիչոյանը հայտարարագրել է 2 բնակարան բազմաբնակելի շենքում եւ մի հողամաս. անշարժ գույքը Չիչոյանը ժառանգություն է ստացել: Բնակարաններից մեկը գտնվում է Երեւանի Արաբկիր վարչական շրջանում, իսկ մյուսը՝ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքում. հողամասը Շողակաթ համայնքում է: Չիչոյանը տրանսպորտային միջոց չի հայտարարագրել: Նրա բանկային ավանդները կազմել են 6 մլն դրամ, կանխիկ դրամական միջոցները՝ 18 մլն դրամ եւ 20 հազար դոլար: Դատավոր Չիչոյանն ունի նման ֆինանսական միջոցներ, սակայն նրա տարեկան եկամուտները կազմում են 4 մլն 667 հազար դրամ:

Եկամուտներից 2 մլն 95 հազար դրամը աշխատանքի վարձատրություն է ՀՀ բարձրագույն դատական խորհրդից, 2 մլն 80 հազարը աշխատանքի վարձատրություն է ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունից, իսկ 492 հազար դրամը վարկ է «Էվոկա» բանկից: Ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 4 մլն 514 հազար դրամ: Անհասկանալի է մնում եւ կասկածելի թվում, թե ինչպես է Չիչոյանը տարեկան եկամտի չափին հասնող վարկային միջոցները մարում: Նաեւ հետաքրքիր փաստ կարող է դիտվել այն, որ դատավորի կանխիկ դրամական միջոցները 6,5 անգամ գերազանցում են նրա տարեկան եկամուտները: Նա նաեւ չի նշել այս գումարների ստացման աղբյուրները, ինչը կարող է կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մոտ կասկած առաջացնել, եւ ԿԿՀ-ն որոշում կայացնի վարույթ հարուցելու:

Հիշեցնենք, որ երբ Ժորա Չիչոյանը, 44-օրյա պատերազմում զոհված զինծառայող Ժորա Մարտիրոսյանի մորը՝ Գայանե Մարտիրոսյանին, կալանքի տակ վերցնելու որոշում կայացրեց, այս որոշումից հետո մամուլը գրեց, որ դեռեւս մեկ տարի առաջ ՀՀ նախագահին առարկություն էր ներկայացրել Ժորա Չիչոյանին դատավոր նշանակելու մասով ՀՀ բարձրագույն դատական խորհուրդ, որը ԲԴԽ-ն ընդունել էր ի գիտություն, սակայն ԲԴԽ-ում դատավոր հորեղբոր՝ Սերգեյ Չիչոյանի եւ իր հոր՝ Շիրակի մարզի դատախազ Արմեն Չիչոյանի գործուն ջանքերով, ԲԴԽ-ն հաշվի չառավ նախագահի առարկությունը եւ Ժորա Չիչոյանին նշանակեց դատավոր: Իշխանության «սրտի» դատավոր Ժորա Չիչոյանն էլ, որ քար չգցի իր հոր՝ Շիրակի մարզի դատախազ Արմեն Չիչոյանի կարիերայի վրա, հորեղբոր՝ դատավոր Սերգեյ Չիչոյանին չվնասի, կամ հորեղբոր փեսայի՝ Անուշավան Մուշեղյանի համար խնդիրներ չստեղծի (որը նույնպես դատավոր է), կալանքի տարավ զոհվածի մորը:

*ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ Է ՎՏԱՆԳՎԱԾ

# ՀԱՆՈՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅԱՆ

**«Միասին» այլընտրանքային հասարակական-քաղաքական շարժումն իր համերաշխությունն է հայտնում «Տավուշը հանուն հայրենիքի» շարժմանը եւ նրա հռչակած արժեքներին ու կարգախոսին, այն է՝ «Պատիվ եւ հայրենիք»:**

Մենք պաշտպանում ենք Հայաստանում շարժման նախաձեռնությունը՝ հանուն ազգային համերաշխության եւ միասնության, քանի որ վտանգված է ոչ միայն Տավուշի մարզի Ոսկեպարի ռազմավարական տարածքը, այլեւ Հայաստանի պետականությունը եւ հայրենիքի ամբողջականությունը:

«Միասին» այլընտրանքային հասարակական-քաղաքական շարժումը պատրաստակամ է ցանկացած ձեւաչափով համագործակցել՝ հանուն պետականության, անկախության, անվտանգության եւ հայ ժողովրդի ազգային արժանապատվության:

*«Միասին» այլընտրանքային հասարակական-քաղաքական շարժման համակարգող խորհուրդ:*

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Գ.

Շրջակա միջավայրի նախարարության Ջրային ռեսուրսների կառավարման վարչության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ Կառավարության 07.03.2003թ. N217-Ն եւ 03.08.2023թ. N1332-Ն որոշումների պահանջների համաձայն՝ մշակվում է Հրաչիկ Անդրանիկի Եվրեյանի կողմից Արարատի մարզի Մասիս համայնքի Հովտաշատ գյուղի վարչական տարածքում ձկնաբուծական նպատակով՝ Ռաֆիկ Մանուկյանի եւ Հենրիկ Եվրեյանի ձկնաբուծարանի գործունեությունից առաջացած հետադարձ ջրերից՝ 135.0 լ/վ ջրառ իրականացնելու ջրօգտագործման թույլտվության ստացման նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի մշակման աշխատանքներին եւ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին՝ ժամը 17-ից - 18-ը, դիմել ջրային ռեսուրսների կառավարման եւ պահպանության մարմին (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ):

Ծանուցմամբ ներկայացված փաստաթղթի նախագծի նախնական տարբերակի վերաբերյալ դիտողություններ եւ առաջարկություններ ներկայացնելու դեպքում փաստաթղթի քննարկումը տեղի կունենա 2024 թվականի ապրիլի 23-ին՝ ժամը 16:00-ին:

Հասցե՝ կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ: (տարեթիվը, ամիսը, ամսաթիվը)

*Շրջակա միջավայրի նախարարություն*

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 16 պատահար. 28 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ (3)

«Ֆլորես» Աճուրդի Տուն» ՍՊԸ-ն (այսուհետ՝ կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ-ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու է Էդգար Ռուբենի Հովսեփյանին գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտը՝

- ՀՀ, Արմավիրի մարզ, համայնք Փարաքար, գյուղ Փարաքար, Գ. Լուսավորչի փողոց, 92/1 հասցեում գտնվող 377,2 քմ բնակելի տուն եւ 0,0953 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 69300000 ՀՀ դրամ:

Լոտի նկատմամբ սահմանափակումներ՝ գույքը գրավադրված է:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 06.05.2024թ.-ին, ժ.12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 30.12.2024թ.: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Ֆլորես» ԱՏ ՍՊԸ-ի դրամարկղում՝ աճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Ամերիաբանկ» ՓԲԸ-ում 1570005285290100 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Լոտն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեով եւ ծանոթանալ լոտին՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը՝ դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 52-61-85 հեռախոսահամարով կամ այցելել www.flores.am, www.borsa.am կայքերը:

## ՀԱՆԴԻՊՈՒՄ

# ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ՝ ՏՏ ՈԼՈՐՏԻ ՇՈՒՐՋ

***Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի տեղակալ Վահան Կոստանյանն ապրիլի 17-ին Ռիյադում հանդիպում է ունեցել Սաուդյան Արաբիայի տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի տեղակալ Ահմադ Ալ-Սայանի հետ: Հանդիպումը կայացել է ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի՝ ՍԱ այցի շրջանակներում:***



Ինչպես նշված է ՀՀ ԱԳՆ տարածած հաղորդագրության մեջ, զրուցակիցները հանգամանալից անդրադարձել են Հայաստանի եւ Սաուդյան Արաբիայի միջեւ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում համագործակցության հնարավորություններին եւ զարգացման հեռանկարներին: Արձանագրելով, որ երկու երկրներն այս ոլորտում «խոսում են նույն լեզվով», կիսում են նույն առաջնահերթությունները, զրուցակիցները նախանշել են փոխգործակցության հիմնական ուղղություններն ու պայմանավորվել նպաստել համապատասխան կառույցների միջեւ կապերի զարգացմանը: ՀՀ ԱԳ նախարարի տեղակալը զրուցակցին ներկայացրել է ՀՀ կառավարության համար առաջնահերթություն հանդիսացող ՏՏ ոլորտի զարգացման տեսլականը եւ մինչ օրս գրանցված հաջողությունները՝ ընդգծելով ընդհանուր տնտեսության մեջ ոլորտի զբաղեցրած էական մասնաբաժինը: Վահան Կոստանյանը զրուցակցին է ներկայացրել ոլորտի զարգացման գործում կանանց ներգրավվածության բարձր ցուցանիշները, ինչպես նաեւ կրթության մեջ նորարար լուծումներին հատկացվող ուշադրությունը՝ այս համատեքստում անդրադառնալով «ԹՈՒՄՈ» ստեղծարար կենտրոնի գործունեության միջոցով ընձեռնվող հնարավորություններին:

Հաշվի առնելով թվային կառավարման, արհեստական բանականության ներդրման ուղղությամբ Սաուդյան կողմի հաջողությունները՝ զրուցակիցները պայմանավորվել են իրականացնել ձեւավորված փորձի փոխանակում եւ խթանել կապերը ոլորտի առաջատար ընկերությունների միջեւ:

*ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ*

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գ

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ (1)

«Բիէսթի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ-ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ՝ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու են «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտերը.

- Շիրակի մարզ, համայնք Անի, Մարալիկ ք., 1-ին թաղամաս, 2 շենք, 13 հասցեում գտնվող 68,08 քմ բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 7700000 ՀՀ դրամ:

- Կոտայքի մարզ, համայնք Հրազդան, Հրազդան ք., Կենտրոն թաղամաս, 98 շենք, 36 հասցեում գտնվող 75,7 քմ բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 15150000 ՀՀ դրամ:

Լոտերի նկատմամբ սահմանափակումները՝ գույքերը գրավադրված են:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 06.05.2024թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 06.06.2024թ.-ին: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բիէսթի» ՍՊԸ -ի դրամարկղումաճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին) կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով:Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.borsa.am կայքերը:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ (2)

«Բիէսթի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ -ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ընթացքում վաճառվելու են «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) սեփականության իրավունքով պատկանող հետեւյալ լոտերը՝

- ք. Երեւան, Կենտրոն, Վ. Անտառային փողոց, 124/15 հասցեում գտնվող 639 քմ բնակելի տուն, 70,5 քմ ավտոտնակ, 40 քմ լողավազան եւ 0,16 հա հողամաս: Բնակելի տան ավարտվածության աստիճանը՝ 50-80%: Լոտի մեկնարկային գինը՝ 665000000 ՀՀ դրամ:

- ք. Երեւան, Շենգավիթ, Հ. Մանանդյան փողոց, 1 շենք, 20 հասցեում գտնվող 51,9 քմ բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 29000000 ՀՀ դրամ:

Աճուրդի փուլերը՝ հոլանդական եղանակով, ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31 հասցեում 06.05.2024թ.-ին, ժ. 12:00-ին, այնուհետեւ հոլանդական եղանակով կայացվող աճուրդի յուրաքանչյուր հերթական փուլը կանցկացվի յուրաքանչյուր հաջորդ աշխատանքային օրը, նույն վայրում, նույն ժամին: Աճուրդի ավարտը՝ 30.12.2024թ.: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բիէսթի» ՍՊԸ -ի դրամարկղումաճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթը եւ աճուրդի վկայականը:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին, լոտերի ամբողջական ցանկին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը՝ դիմելով Կազմակերպչին եւ Բորսային՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.borsa.am կայքեր:

● *«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:*

ՋՈՐՋ ԲԱՅՐՈՆ

# «ՀԱՅԵՐԵՆՆ ԱՍՏԾՈ ՀԵՏ ԽՈՍԵԼՈՒ ՄԻԱԿ ԼԵԶՈՒՆ Է»

**«Եթե ուզում ես հպարտանալ, հպարտացիր իտալերեն: Եթե ուզում ես հրամայել, հրամայիր գերմաներեն: Եթե ուզում ես սեր խոստովանել, խոստովանիր ֆրանսերեն: Եթե ուզում ես հայհոյել, հայհոյիր թուրքերեն: Եթե ուզում ես Արեւելքն զգալ, կարդա պարսկերեն: Իսկ եթե ուզում ես աղոթել, աղոթիր միմիայն հայերե՛ն, Միայն հայերե՛ն: Հայերենը Աստծո հետ խոսելու Միակ լեզուն է»:**



Բրիտանացի գրող եւ մեծ հայասեր լորդ Ջորջ Գորդոն Բայրոնը մահացել է 200 տարի առաջ՝ այս օրը: 19-րդ դարի անգլիացի բանաստեղծը ռոմանտիզմի ամենաերեւելի ներկայացուցիչներից էր եւ Եվրոպայի մեծագույն գրողներից մեկը: Նրա ամենաճանաչված աշխատանքներից է՝ մի շարք ինքնակենսագրական տարրեր պարունակող սկանդալային «Դոն Ժուան» պոեմը:

Բայրոնի մասին հիշատակումները հաճախ շփոթ են առաջացնում, քանի որ նա մի շարք անուններով է հայտնի: Հաճախ ստորագրել է՝ որպես «Նոել-Բայրոն», «Ջորջ Գորդոն Նոել Բայրոն», « Գորդոն-Բայրոն» կամ «Լորդ Բայրոն»:

Գրողը ծնվել է Նորմանդիայից Վիլհեմ Նվաճողի հետ Անգլիա եկած ընտանիքում, որոնց նախնիները Գասթինգի մոտ մարտից հետո պարգեւատրվել էին սաքսերից բռնագրավված հարուստ կալվածքներով: Ընտանիքի անունը նախապես Բուրուն է եղել, որը հաճախ կարելի է հանդիպել միջնադարյան ասպետական տարեգրություններում, ինչի արդյունքում էլ ընտանիքի անունը վերափոխվել է Բայրոնի:

Ընտանիքը ավելի ազդեցիկ է դարձել հատկապես Հենրի 8-րդի օրոք, ով կաթոլիկական միաբանությունների լուծարման ժամանակ Բայրոնին «սըր Ջոն փոքր՝ մեծ մորուքով» (sir John the little with the Great Beard) մականունն էր տալիս եւ Նյուսթեդյան աբբայության հարուստ կալվածքներ շնորհում Նոթինգեմյան կոմսությունում: Տոհմը, սակայն, ընդհատվում է, եւ ընտանեկան ազգանունն անցնում է բայրոններից մեկի ապօրինի որդուն միայն, որի ժառանգները հետագայում աչքի են ընկնում Ստյուարդների դինաստիային անվերապահ նվիրվածությամբ, ինչի համար էլ Չարլզ առաջինը այդ տոհմի ներկայացուցչին շնորհում է պերի կոչումով բարոն Ռոչդելի տիտղոս:

Բայրոնների տոհմի հայտնի ներկայացուցիչներից էր գրողի հայրը՝ նավապետ Ջոն Բայրոնը, ով առաջին կնոջ մահից հետո ամուսնանում է էսկվայր Ջորջ Գորդոնի միակ ժառանգորդուհու՝ Եկատերինա Գորդոնի հետ, որը սերում էր շոտլանդական Գորդոնների հայտնի տոհմից եւ երակներում հոսում էր շոտլանդական արքաների արյունը: Հենց այդ երկրորդ ամուսնությունից էլ ծնվում է ապագա հանճարը: Նավապետը, քանի որ, հավակնություն ուներ կնոջ հայրական կալվածքների նկատմամբ, սկսում է կրել նաեւ Գորդոն ազգանունը, եւ որդին հենց այդպես էլ գանցվում է՝ Ջորջ Գորդոն-Բայրոն:

Հետագայում Նոել ազգանունը գրողի անվանն ավելանում է զոքանչի պահանջով, ինչի դիմաց նա Բայրոնին է կտակում ողջ կարողությունը:

Ի ծնե ոտքի խնդիրներ ունեցող պատանին կյանքը սկսեց աղքատության մեջ, քանի որ հայրն ու մայրը գրեթե վատնել էին ընտանեկան ողջ ունեցվածքը: 1799 թվականից նա երկու տարի բնակվեց բժիշկ Գլենիի դպրոցում, որտեղ էլ ընթերցեց բժշկի ողջ գրադարանը եւ վերականգնվեց այնպես, որ սկսեց հանգիստ երկարաճիտ կոշիկներ կրել: Ապա Բայրոնը կրթությունը շարունակեց Հերոույում, որտեղ մեծ աճ գրանցեց: Նշենք, որ 1798 թվականին, երբ ընդամենը 10 տարեկան էր Բայրոնը, ժառանգեց մահացած պապիկի տիտղոսը՝ դառնալով Պեր:

1813 թվականին Բայրոնն առաջարկություն է անում օրիորդ Աննա Իզաբելլա Միլբենկին՝ հարուստ բարոնետ Ռալֆ Միլբենկի դստերը՝ լորդ Ուէնթվորտի թոռնուհուն եւ ժառանգորդուհուն, որը նրան մերժում է, սակայն նամակագրության մեջ է մնում նրա հետ: Մեկ տարի անց Բայրոնը եւս մեկ անգամ առաջարկություն է անում աղջկան եւ այս անգամ դրական պատասխան է ստանում: Մեկ տարի տեւած ամուսնական կյանքից եւ դստեր ծնունդից հետո Բայրոնի կինը լքում է նրան եւ վերադառնում հայրական տուն՝ ավելի ուշ տեղեկացնելով, որ ցանկանում է ամուսնալուծվել:

Այս ամենից հետո Բայրոնը լքում է Անգլիան եւ մեկնում Շվեյցարիա: Ժնեւում բնակություն հաստատած գրողը ճանապարհորդում է երկրում եւ 1816 թվականի նոյեմբերին տեղափոխվում Վենետիկ: Հենց այստեղ էլ Բայրոնը գրում է իր ստեղծագործությունների մեծ մասը: Անգլիայից դուրս գալիս գրողը վաճառել էր իր կալվածքը, ինչը նրան հնարավորություն էր տվել կենտրոնանալ ստեղծագործական կյանքի վրա եւ չմտածել ապրուստի մասին:

Վենետիկում Բայրոնը բնակություն է հաստատում  Սուրբ Ղազար կղզում գտնվող Մխիթարյան միաբանությունում, որտեղ էլ ստեղծագործում է եւ ընթերցում: Առ այսօր Միաբանության թանգարանում պահպանվում են գրողի գրասեղանն ու բազկաթոռը, ինչպես նաեւ բազմաթիվ անձնական իրեր: Բայրոնն իր առանձին անկյունն է ունեցել նաեւ Միաբանության տարածքում գտնվող այգում, որտեղ էլ սիրել է հանգստանալ:

1824 թվականին լորդը միանում է հույների ապստամբությանը. նա իր միջոցներով ջոկատ է հավաքում եւ ժամանում Միսոլոնգի: Սակայն, նախքան թուրքական հարձակումը գրողը տենդի նոպա է ունենում եւ ապրիլի 19-ին մահանում:

Առ այսօր Հունաստանում գրողի մահը նշում են ազգային սուգով: Նրա մարմինը հանգչում է Հակնել քաղաքի Սուրբ Մարիամ Մագդաղենացի եկեղեցու ընտանեկան դամբարանում:

*ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ*

«Ohannes Tchekidjian: Life and Career»

# ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ՝ ՆՎԻՐՎԱԾ Հ. ՉԵՔԻՋՅԱՆԻՆ

**Լույս է տեսել ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի տնօրեն, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Աննա Ասատրյանի «Ohannes Tchekidjian: Life and Career» աշխատությունը:**

Այս մասին տեղեկանում ենք գիտությունների ազգային ակադեմիայի տարածած հաղորդագրությունից: Աշխատությունը նվիրված է ՀՀ ազգային հերոս, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, Խորհրդային Միության եւ Հայաստանի պետական մրցանակների դափնեկիր, Հայաստանի ազգային ակադեմիական երգչախմբի երկարամյա գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր, ՀՀ ԳԱԱ պատվավոր դոկտոր պրոֆեսոր Հովհաննես Չեքիջյանի ծննդյան 95-ամյակին:

Աշխատության խմբագիրն է Հայաստանի Հանրապետության ԳԱԱ թղթակից անդամ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Արարատ Աղասյանը:

Աշխատության մեջ անգլերենով առաջին անգամ ներկայացվել է Հովհաննես Չեքիջյանի կյանքն ու կատարողական արվեստը, բացահայտվել են Չեքիջյան-խմբավարի ներդրումը հայ խմբերգային արվեստի զարգացման գործում, Մաեստրոյի խմբավարական եւ դիրիժորական արվեստի կատարողական առանձնահատկությունները:

ՄԱՐԶԱԿԱՆ

## ՇՆՈՐՀԱՎՈՐԵԼ Է «ՌԵԱԼԻՆ»

Անգլիայի չեմպիոն «Մանչեսթեր Սիթիի» կատալոնացի գլխավոր մարզիչ Խոսեպ Գվարդիոլան մեկնաբանել է Մադրիդի «Ռեալից» կրած պարտությունը Չեմպիոնների լիգայի քառորդ եզրափակչում: Անգլիայում տեղի ունեցած պատասխան հանդիպման հիմնական եւ լրացուցիչ ժամանակն ավարտվել էր ոչ-ոքի՝ 1:1: Հետխաղային 11-մետրանոցներով «Ռեալը» հաղթել էր 4:3 հաշվով: Մադրիդում տեղի ունեցած առաջին խաղում գրանցվել էր ոչ-ոքի՝ 3:3:

«Ես կնախընտրեի հաղթել, բայց իմ շնորհավորանքները՝«Ռեալին»: Մենք արեցինք հնարավոր ամեն ինչ, հրաշալի էինք բոլոր իմաստներով: Ցավոք, մենք չկարողացանք հաղթել: Ունենք այն, ինչ ունենք:

Ֆուտբոլում գլխավորը գոլերն են, եւ մրցակիցը մի փոքր ավելի լավ իրացրեց 11 մետրանոցները: Ամեն ինչ վճռեցին մանրուքները: Երբեմն հաղթում ես 11-մետրանոցներով, երբեմն չես հաղթում»,- Գվարդիոլայի խոսքը մեջբերում է ՈՒԵՖԱ-ի կայքը:

Կիսաեզրափակչում «Ռեալը» կմրցի Մյունխենի «Բավարիայի» հետ:

## ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ ՀԱՅՏՆԻ ԵՆ

Ֆուտբոլի Չեմպիոնների լիգայի կիսաեզրափակչի վերջին մասնակիցները հայտնի են:

Քառորդ եզրափակչի պատասխան խաղում՝ «Բավարիա»-ն, սեփական հարկի տակ ընդունելով «Արսենալ»-ին, առավելության հասավ նվազագույն հաշվով: Միակ գնդակը խփեց Կիմիխը: Թիմերի առաջին հանդիպումն ավարտվել էր 2:2 հաշվով: Մյունխենի «Բավարիա»-ն Չեմպիոնների լիգայի կիսաեզրափակչում է:

Օրվա մյուս խաղում ՉԼ գործող չեմպիոն «Մանչեսթեր Սիթի»-ն, մրցելով «Ռեալ»-ի հետ, զիջեց հետխաղյա 11 մետրանոց հարվածաշարով: Հիմնական ժամանակն ավարտվեց ոչ-ոքի. հաշվի մեջ փոփոխություն չեղավ նաեւ լրացուցիչ ժամանակում եւ «Ռեալ»-ը հաղթեց 11 մետրանոց հարվածաշարում՝ 4:3 հաշվով: «Արքայական ակումբը» Չեմպիոնների լիգայի կիսաեզրափակչում է:

Կիսաեզրափակչում կմրցեն ՊՍԺ-«Բորուսիա», «Բավարիա»-«Ռեալ» զույգերը:

## ՀԱՅԱՍՏԱՆԸ ԿՄԱՍՆԱԿՑԻ 3 ՄԱՐԶԻԿՈՎ

Հայաստանը ձյուդոյի Եվրոպայի առաջնությանը կմասնակցի 3 մարզիկով:

Խորվաթիայի մայրաքաղաք Զագրեբում կայանալիք Եվրոպայի առաջնությանը կմասնակցեն Աշիկ Անդրեյանը (60 կգ), Արտակ Թորոսյանը (73 կգ) եւ Գոռ Կարապետյանը (90 կգ):

Այս օրերին թիմն ուսումնամարզական հավաք է անցկացնում Ռուսաստանի Սոչի քաղաքում:

Հայաստանը Փարիզի Օլիմպիական խաղերում դեռեւս ոչ մի ձյուդոիստ մասնակից չունի:

*● Ապրիլի 21-ին՝ժամը 19:00-ին, Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում կբեմադրվի «Լոռենցաչչո» իրոնիկ տրագեդիան: Տոմսերի արժեքը՝2000-3000, 4000-5000 դրամ:*

# ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

## ՄԱՔՍԱՅԻՆ

**ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ եթե անձը հեծանիվով հատում է Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանը, ապա արդյոք հեծանիվը դիտվո՞ւմ է տրանսպորտային միջոց:**

*Գնել Հարությունյան (33 տարեկան)*



**ՊԱՏԱՍԽԱՆ.** Քաղաքացու հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ «Մաքսային կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ ապրանքներ են համարվում ՀՀ սահմանով տեղափոխվող բոլոր տեսակի առարկաներն ու իրերը, այլ գույքը, այդ թվում՝ արժույթը, արժութային արժեքները, էլեկտրական, ջերմային եւ այլ տեսակի էներգիան, փոխադրամիջոցները՝ բացառությամբ նույն հոդվածով սահմանված տրանսպորտային միջոցների, իսկ «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ տրանսպորտային միջոցներ են համարվում բոլոր տեսակի փոխադրամիջոցները, որոնք օգտագործվում են Հայաստանի Հանրապետության սահմանով ուղեւորների եւ ապրանքների միջազգային տեղափոխման նպատակով, այդ թվում՝ բեռնարկղերը (կոնտեյներները) եւ այլ օժանդակ փոխադրամիջոցները:

ՀՀ մաքսային սահմանով տեղափոխվող հեծանիվը չի հանդիսանում ՀՀ մաքսային սահմանով ուղեւորների եւ ապրանքների միջազգային տեղափոխման նպատակով օգտագործվող տրանսպորտային միջոց, այլ հանդիսանում է անձի հետ ՀՀ մաքսային սահմանով տեղափոխվող անձնական գույք՝ համապատասխանելով «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքով սահմանված «ապրանք» հասկացությանը:

*Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե*

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Նշենք, որ սահմանված դեպքերում մաքսատուրքը եւ հարկերը վճարվում են մինչեւ մաքսային հայտարարագիր ներկայացնելը կամ դա ներկայացնելուն զուգահեռ:

## ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

**ՀԱՐՑ. Եթե ԱՊՊԱ հատուցման գործընթացում ապահովագրական ընկերության կողմից հատուցման ժամկետի խախտում է եղել, ապա ի՞նչ պատասխանատվության միջոցներ են սահմանված:**

*Ռիմա Մնացականյան (38 տարեկան)*



**ՊԱՏԱՍԽԱՆ.** Հայտնում ենք, որ ապահովագրական հատուցման գործընթացի կարգավորման՝ ներառյալ փորձաքննությունների, նախնական զննության գործընթացի իրականացման, ապահովագրական հատուցման վճարման եւ ծանուցումների իրականացման համար «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ -ի RL 1-001 կանոններով (ԱՊՊԱ Ընդհանուր պայմաններ) նախատեսված ժամկետների խախտման դեպքում ապահովագրական հատուցում վճարելու վերաբերյալ դիմում ներկայացրած անձն իրավունք ունի դիմում ստացած ապահովագրական ընկերությունից պահանջել յուրաքանչյուր կետանցված օրվա համար վճարել տույժ՝ օրենքով սահմանված չափով, իսկ օրենքով համապատասխան խախտման համար տույժ սահմանված չլինելու դեպքում՝ տուժողի կրած տվյալ տեսակի վնասի համար նախատեսված ապահովագրական գումարի 0,1 տոկոսի չափով, որը չի կարող պակաս լինել հիսուն հազար ՀՀ դրամից, եթե միեւնույն հատուցման գործընթացում սույն կանոններով նախատեսված բոլոր գործողությունների համար սահմանված ժամկետների կետանցված օրերի քանակը 7 եւ ավելի է:

*Ֆինանսական համակարգի հաշտարար*

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Ի դեպ, միեւնույն համադրելի ժամանակահատվածում սույն կանոններով նախատեսված տարբեր գործընթացներ կետանցվելու դեպքում այդ ժամանակահատվածի համար տույժերը հաշվարկվում են մեկ անգամ:

## ԼՈՒՐ ԿԱԴՐ

*Լուսանկարը՝ համացանցից*




Հայաստանի պատմության թանգարանում երեկ Հուշարձանների եւ տեսարժան վայրերի միջազգային օրվա շրջանակում տեղի ունեցավ «Լեռնային Ղարաբաղի հակամարտության գոտու պատմամշակութային ժառանգությունը» գիրք-ալբոմի անգլերեն տարբերակի շնորհանդեսը:

## ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:




Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

## ԱՌԱՋԱՐԿ
## հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

### Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________

Ազգանուն՝ ____________

Առաքման հասցե՝ ____________

Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

*Հեռ.՝(060) 490049*

*0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.*

## ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ




| | | |
|---|---|---|
| | Շիրակ | + 4 + 5<br>+15 + 20 |
| | Կոտայքի լեռներ | + 2 + 5<br>+15 + 19 |
| | Կոտայքի նախալեռներ | + 8 + 10<br>+20 + 22 |
| | Գեղարքունիք | + 2 + 5<br>+15 + 18 |
| | Լոռի | + 5 + 7<br>+22 + 25 |
| | Տավուշ | + 7 + 10<br>+23 + 26 |
| | Արագածոտնի լեռներ | + 2 + 5<br>+14 + 18 |
| | Արագածոտնի նախալեռներ | + 7 + 9<br>+19 + 23 |

| | | |
|---|---|---|
| | Արարատ | +10 + 12<br>+25 + 27 |
| | Արմավիր | + 8 + 10<br>+25 + 27 |
| | Վայոց ձորի լեռներ | + 2 + 4<br>+15 + 19 |
| | Վայոց ձորի նախալեռներ | +10 + 13<br>+24 + 27 |
| | Սյունիքի հովիտներ | + 8 + 11<br>+24 + 26 |
| | Սյունիքի նախալեռներ | + 4 + 8<br>+18 + 21 |
| | ԼՂՀ | + 2 + 7<br>+17 + 20 |
| | Երեւան | + 13 + 15<br>+ 20 + 22 |

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **18.4.2024**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
**ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*